

Մշակութային և հասարակական ամսագիր



## ԱՐՅԱԽԻ ՀԵՐՈՍՆԵՐ



ԱՐԱՎՅԱՆ  
ՍԱՄՎԵԼ  
ԱՆՂՐԱՆԻԿԻ



ՍԱՐԳՅԱՆ  
ՎԱԳԳԵՆ  
ԶԱՎԵՆԻ



ՂՈՒԼՅԱՆ  
ԱՇՈՏ  
ՀՄՅԱԿԻ



ՍԵԼԵՈՆՅԱՆ  
ՄՈՆՁԵ  
ՉԱՂԼԳԻ



ՕՋԱՆՅԱՆ  
ՍԵՅՐԱՆ  
ՍՈՒՇԵՐԻ



ՔՈՉԱՐՅԱՆ  
ՈՌԲԵՐՏ  
ՍԵՂՐԱԿԻ



ԻՎԱՆՅԱՆ  
ՔՐԻՍՏԱՓՈՐ  
ԻՎԱՆԻ



ԳՐԻԳՈՐՅԱՆ  
ՄԱՆՎԵԼ  
ՍԵՎՏՈՐԻ



ՎԱՐՄՊԵՏՅԱՆ  
ՍԱՄՎԵԼ  
ԶԱՄԻԼԻ



ՍԱՐԳՅԱՆ  
ՍԵՐՃ  
ԱԶՏՏԻ



ՂԵԿՈՆՅԱՆ  
ՊԵՏՐՈՍ  
ԱՐՇԱՆՈՒՅԱՆԻ



ՊՐՈՂՈՅՅԱՆ  
ՅՈՒՐԱ  
ՎԱՂԱՐՇԱԿԻ



ՀԱԿՈԲՅԱՆ  
ՄՈՎՍԵՍ  
ՀՐԱՆՏԻ



ԲԱՆԱՍԱՆՅԱՆ  
ՎԻՏԱԼԻ  
ՄԻՔԱՅԵԼԻ



ԳԱՄՊՈՐՅԱՆ  
ԳԵՈՐԳԻ  
ԻՍԱՀԱԿԻ



ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ  
ՎԱՀԱԳՆ  
ՎԱՂԻՆԱԿԻ



ԲԱՆԱՅԱՆ  
ԶՈՐԻ  
ՀԱՅԿԻ



ՂԱՐԱՅԱՆ  
ԱՐՇԱԿԻՐ  
ՍՈՒՐԵՆԻ



ՂՈՒՎԱՍՅԱՆ  
ԱՐԿԱՂԻ  
ԱՐՇԱԿԻՐԻ



ՏԵՐ.ԹԱՂԵՎՈՍՅԱՆ  
ԱՐԿԱՂԻ  
ԻՎԱՆԻ



ՊԱՐԳԵՎ  
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
ՍԱՐՏԻՐՈՅԱՆ



ՍԵՂՐՅԱՆ  
ՇԱՀԵՆ  
ԳԻՆԱՎՈՐԻ



ԳԱՆԱՏՅԱՆ  
ԺԱՆՆԱ  
ԳԵՎՈՐԳԻ

# Այս համարում

## Հայերեն բաժին

1- Հայաստան.....	1
2- Արևմտյան Հայաստան.....	7
3- Մփյուռք.....	9
4- Միջազգային.....	9
5- Հասարակական.....	10
6- Մշակույթ.....	11
7- Խոհեր.....	11
8- Գծանկարչություն.....	12
9- Առածանի.....	12

## Պարսկերեն բաժին

1- Հայ գրականություն.....	1-8
---------------------------	-----

← **Շապիկի առաջին էջում՝** Արցախի հերոսներ

**Վերջին էջում՝** Էդ. Բաղդասարյանի նոր գրերը

Համար 202, Օգոստոս 2015 թ.

No. 202, August 2015

ماهنامه لویس - شماره ۲۰۲ شهریور ماه ۱۳۹۴

# ԼՈՒՅՍ

## Մշակութային և հասարակական ամսագիր

Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝

**Էդ. Բաղդասարյան**

Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան  
Թամ Դարախանյան, Մաթենիկ Ավետիսյան  
Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys\_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

**LOUYS**

**Armenian Cultural and Social Monthly**

License-holder and Editor-in-Chief

**Edic Baghdasarian**

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

**POBox 15875-9488 Tehran – Iran**

E-mail : **louys\_monthly@yahoo.com**

Internet : **www.louysonline.com**

**Թերթի Գինը՝** Հատվածաճառ - 5000 ռիալ  
**Բաժանորդագրություն՝**

**Իրան՝** մեկ տարի՝ 60,000 ռիալ

**Արտասահման՝** մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են  
չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին

# Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (Արցախ) կայացած պետություն է. Քաղաքագետ



Լեռնային Ղարաբաղը բավական կայացած պետական կազմավորում է, որն իհարկե սերտորեն համագործակցում է Հայաստանի հետ: Այս մասին [NEWS.am](http://NEWS.am)-ի թղթակցի հետ գրույցում հայտարարեց ռուս քաղաքագետ Ալեքսանդր Սկակովը:

Նա նշեց, որ անկախության ճանապարհին Լեռնային Ղարաբաղը ավելի շատ հաջողություններ է գրանցել, քան ձախողումներ: «Դա ակնհայտ է: Սակայն պետք է հասկանալ, որ ազգերի ինքնորոշման իրավունքից բացի կա նաև Լեռնային Ղարաբաղի ապագա սահմանների հարցը: Դա շատ բարդ հարց է», - հավելեց Սկակովը:

1991թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական պատգամավորների և Շահումյանի շրջափակի համատեղ նիստում հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը: Անկախության պահից Լեռնային Ղարաբաղը հաջողությամբ կազմակերպել է 6 խորհրդարանական և 5 նախագահական ընտրություններ, որոնք միջազգային դիտորդների կողմից գնահատվել են որպես ազատ և թափանցիկ:

## Հայաստան

### 25 տարի առաջ ընդունվեց Հայաստանի անկախության հռչակագիրը

Ուղիղ 25 տարի առաջ՝ 1990թ.-ի օգոստոսի 23-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց Հայաստանի անկախության հռչակագիրը:

Անկախության հռչակագիրը հիմնվում էր Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 1989թ.-ի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշման վրա:

Հռչակագրի ընդունումից շուրջ 1 տարի անց՝ 1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանում տեղի ունեցավ անկախության հանրաքվե.

Հայաստանի անկախության հռչակագիր.

«Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը՝ արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի նակատագրի առջև համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում, ելնելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից, կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա, զարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները, խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը,

#### ՀՈՋԱԿՈՒՄ Է

անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:

1. Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն՝ կրճատ՝ Հայաստան: Հայաստանի Հանրապետությունն ունի իր դրոշը, զինանշանը և հիմնը:

2. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ: Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը և օրենքները:

3. Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունը իրագործում է անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրության և օրենքների հիման վրա: Հանրապետության ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը: Արտերկրի հայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք ունի: Հայաստանի Հանրապետության քաղաքացիները գտնվում են նրա պաշտպանության և

աջակցության ներքո: Հայաստանի Հանրապետությունը սպահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից:

5. Հայաստանի Հանրապետությունը իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունը սպահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ: Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ սպառազինության իր մասնաբաժնի իրավունքը: Հայաստանի Հանրապետությունն ինքն է որոշում իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը: Այլ երկրների զորամիավորումները, նրանց ռազմական բազաները և շինությունները կարող են տեղաբաշխվել Հայաստանի Հանրապետության տարածքում միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ: Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կարող են օգտագործվել միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ:

6. Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը:

7. Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով: Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ ազգային հարստություն, այդ թվում՝ ոսկու պաշարների, արմատի և վայրուտային ֆոնդերի մասնաբաժնի իրավունք:

8. Հայաստանի Հանրապետությունը սեփականության բազմաձևության հիման վրա որոշում է իր տնտեսավարման սուբյեկտները և կարգը, հիմնում սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ, հարկային և մաքսային ծառայություններ:


9. Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում սպահովում է խոսքի, մամուլի, խղճի ազատություն. օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացում:

10. Հայաստանի Հանրապետությունը սպահովում է հայերենի, որպես պետական լեզվի, գործառնությունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթության, գիտության և մշակութային սեփական համակարգ:

11. Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին:

12. Սույն Հռչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության սահմանադրության մշակման, իսկ գործող սահմանադրության մեջ՝ փոփոխությունների և լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար»:

## Հայաստանին պատմական շանս է բաժին հասել. Արման Նավասարդյան



Հայաստանին պատմական շանս է բաժին հասել՝ դուրս գալու ստեղծված ծանր իրավիճակից: Այդ մասին օգոստոսի 21-ին մամլո ասուլիսի ժամանակ հայտարարել է Հայաստանի (Սլավոնական) համալսարանի Համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ Արման Նավասարդյանը:

Նրա խոսքով, աշխարհում տեղի ունեցող գործընթացների ֆոնին Հայաստանը դիտարկվում է որպես Արեւմուտքի և Արևելքի միջև բուֆերային պետություն:

«Ի վերջո, ոչ ԱՄՆ-ը, ոչ Ռուսաստանը իրար վրա ատոմային ռուբեր չեն նետի: Ավելին, բոլորը տեսնում են, թե ինչ մարտահրավերների է այսօր բախվել մարդկությունը և հասկանում են, որ ոչ մի պետություն ի վիճակի չէ միայնակ հաղթահարել դրանք: Իսկ համագործակցության համար պետք է կապող օղակ լինի: Այսօր Հայաստանը նման օղակ է հանդիսանում»,-նշել է դիվանագետը՝ ավելացնելով, որ ԱԳՀ տարածքում բոլոր չափանիշներին համապատասխանող երկրորդ պետությունը չկա:

Անդրադառնալով հայկական դեկավարության՝ փոխարանող քաղաքականություն վարելու փորձերին, դեսպանը նշել է, որ այսօր դա միակ ճիշտ մարտավարությունն է: Նա նշել է, որ Եվրասիական միությանն անդամակցելը, հակառակ շատ վատատեսական կանխատեսումներին, վնաս չի հասցրել Արեւմուտքի հետ Հայաստանի հարաբերություններին:

«Համաշխարհային հանրությունը մեզ համար բարենպաստ եղանակով վերաբերվեց դրան: Տարբեր մակարդակներում ասվեց այն մասին, որ Երեւանը, ԵՏՄ-ի անդամ լինելով, կկարողանա համագործակցել և Արեւմուտքի, և Եվրոպայի հետ: Նշանակալի է, որ խոսքը ոչ թե տնտեսական, այլ ռազմավարական համագործակցության մասին է: Այլ խոսքով ասած՝ Հայաստանը կարող է և ՀԱՊԿ-ի անդամ լինել, և համագործակցել ՆԱՏՕ-ի հետ»,- եզրափակել է Նավասարդյանը՝ ընդգծելով, որ դա ցույց է տալիս, որ Հայաստանի իշխանությունները արտաքին քաղաքականության ճիշտ ուղի են ընտրել:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## «Deutsche Welle»-ն Ղարաբաղի մասին ռեպորտաժ է պատրաստել



Գերմանական «Deutsche Welle» հեռուստարևելությունը ռեպորտաժ է նկարահանել Լեռնային Ղարաբաղի մասին, որը կոչել է «Լեռնային Ղարաբաղի լարվածություն անում է»:

Հեղինակի խոսքով, Ղարաբաղում հակամարտությունը երկար ժամանակ անուշադրության է մատնված, թեև 20 տարի առաջ պատերազմում զոհվել էր մոտ 30 հազար մարդ:

Հաշտությունը խաղաղություն բերեց, սակայն վերջին ժամանակներս տեղեկություններ են ստացվում հրադադարի խախտումների մասին:

Մյուսում նկարահանված դարաբաղցիներից մեկն ընդգծում է, որ իրենք պատերազմ չեն ուզում, այլ միայն պաշտպանում են իրենց հողը, եկեղեցիներն ու ընտանիքները: Միաժամանակ Ղարաբաղի ԱԳ նախարար Կարեն Միրզոյանն ընդգծել է, որ դարաբաղցիները պատերազմից չեն վախենում: «Մենք կարծում ենք, որ կարող ենք համարժեք պատասխան տալ պատերազմ սկսելու փորձերին»,-ասել է նա:

Ռեպորտաժի հեղինակը այցելել է ոչ միայն Ստեփանակերտ, այլև մարտական դիրքեր՝ հավելելով, որ ընդամենը մի քանի տասնյակ մետր է բաժանում հակամարտության կողմերին միմյանցից և Կովկասում եւս մեկ արյունալի պատերազմից:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Համահայկական խաղերի համար Թուրքիայից եկած հյուրերն այցելել են Ծիծեռնակաբերդի հուշահամալիր

Այսօր՝ օգոստոսի 3-ին, Համահայկական ամառային 6-րդ խաղերի բացման արարողությանը մասնակցելու նպատակով Թուրքիայից Հայաստան ժամանած պատվավոր հյուրերը Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Չաքարյանի և գործկոմի անդամների ուղեկցությամբ այցելել են Ծիծեռնակաբերդի հուշակոթող և Հայոց ցեղասպանության զոհերի թանգարան-ինստիտուտ:

Պատվիրակության կազմում են եղել Վանի քաղաքապետ Բեքիր Քայան, Վանի համաքաղաքապետ Հաթիջե Չոբանը, Բիթլիսի քաղաքապետ Հուսեյին Օլանը, Մուտքի քաղաքապետ Օզբան Բիրլիկը, Նորշենի քաղաքապետ Էմին

Օգբանը, Դիարեքիի Սուրի քաղաքապետ Փաթմա Շըք Բարուքը և այլ բարձրաստիճան անձիք:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի նորաբաց ցուցասրահում նրանց են ներկայացրել բացառիկ ցուցանմուշներ, լուսանկարներ ու տարեգրություններ: Այնուհետև պատվիրակները ծաղիկներ են դրել և գլուխ խոնարհել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ:

Այցի ավարտին պատվավոր հյուրերը շնորհակալություն են հայտնել կազմակերպիչներին և թանգարանի անձնակազմին՝ միջոցառումը կազմակերպելու գործում ներդրած ջանքերի համար:



Լուրեր Հայաստանից - NEWS.am

## ԼՂՀ-ն կարողացել է հասնել Էլեկտրաէներգիայի լրիվ ինքնաբավության



Այս պահի դրությամբ Արցախի ՀԷԿ-երում արտադրված էլեկտրաէներգիայի միջին ծավալը մոտավորապես բավարարում է հանրապետության սպառման ներքին պահանջարկը: Այս մասին, NEWS.am-ի թղթակցին տված հարցազրույցում նշել է ԼՂՀ վարչապետի մամուլի քարտուղար Արտակ Բեգլարյանը:

«Քանի որ կարճ ժամանակահատված է, ինչ երեք նոր ՀԷԿ է փաստացի գործարկվել (դրանցից երկուսի լիցենզիաները կտրվեն շուտով), դժվար է դրանց արտադրանքն ամբողջությամբ դիտարկել տարեկան միջին ծավալների հետ, սակայն, ըստ մեր մասնագետների, ակնհայտ է, որ եթե մինչև տարեվերջ պահպանվի պահանջարկի առկա ծավալը, ապա երկրորդ կիսամյակում Արցախը կարող է համարվել էլեկտրաէներգիայի մատով անկախ հանրապետություն:

Այնուամենայնիվ, տնտեսության անընդհատ զարգացմանը զուգահեռ պարբերաբար աճում է նաև էլեկտրաէներգիայի պահանջարկը: Օրինակ՝ այլ նոր արտադրությունների կողքին մի քանի ամսից կգործարկվի Կաշենի

հանքարդյունաբերական կոմբինատը, որը զգալիորեն (ընդհանուր սպառման 20-25 տոկոսով) կավելացնի ներքին պահանջարկը, ինչը, բնականաբար, կիջեցնի էլեկտրաէներգետիկ ինքնաբավության աստիճանը՝ մինչև հաջորդ նախատեսված ՀԷԿ-երի գործարկումը: Այդ համատեքստում մի բան պարզ է, որ վերջին տարիներին արտադրանքի ծավալն ավելի արագ տեմպերով է աճում, քան սպառման ծավալը, եւ այդ միտումը պահպանվելու է զայիք տարիներին», - նշել է Արտակ Բեգլարյանը:

### Ո՞ր ժամանակից է հաջողվել հասնել դրան:

Վերջին երկու ամիսներին երեք ՀԷԿ է փաստացի գործարկվել, որոնցից մեկը հանրային ծառայությունները եւ տնտեսական մրցակցությունը կարգավորող հանձնաժողովի կողմից արդեն ստացել է համապատասխան լիցենզիան, իսկ մյուս երկուսը, կարծում են, կստանան շուտով:

### ԼՂՀ-

### ում քանի՞ ՀԷԿ կա եւ որքան է էլեկտրաէներգիայի սակ ազինը:

Արցախում այժմ փաստացի գործում է 13 ՀԷԿ՝ 6-ական՝ Քաշաթաղում եւ Մարտակերտում եւ 1-ը՝ Շահումյանում: Այժմ արդեն մի քանի ՀԷԿ կառուցման կամ նախագծման փուլում է, որպեսզի ավելի արդյունավետորեն օգտագործվի հանրապետության հսկայական ներուժը: Էլեկտրաէներգիայի սակագինը 1 կիլովատի դիմաց 41.85 դրամ է հաստատված, սակայն կառավարության սուբսիդավորման արդյունքում բնակիչները վճարում են 25 դրամ: Այդ սուբսիդավորումը չի գործում տնտեսվարողների համար:

### Ինչպե՞ս եք դուք գնահատում այդ հաջողված իրադարձությունը:

Արցախի համար էներգետիկ անկախության բարձր աստիճանը ռազմավարական նշանակություն ունի, որի մեկ բաղադրատարրի՝ էլեկտրաէներգիայի մատով հանրապետությունն, ընդհանուր առմամբ, հասնում է գրեթե լրիվ ինքնաբավության մակարդակին: Դրա կարևորությունը զգացվելու է առաջնահերթորեն հավանական ճգնաժամային իրավիճակների դեպքում, երբ էլեկտրաէներգիայի մատակարարումը կախված չի լինի արտաքին եւ խոցելի աղբյուրներից ու ցանցերից: Բացի դրանից, այն լրացուցիչ խթան է հանդիսանում տնտեսության զարգացման համար, քանի որ թույլ է տալիս նվազեցնել կառավարման ու սակագնի հետ կապված ռիսկերը եւ բարձրացնել կանխատեսելիության աստիճանը: Հանդգնված են, որ դրա շնորհիվ տարիների ընթացքում ավելի ու ավելի է ընդգծվելու սեփական արտադրության էլեկտրաէներգիայի համեմատական առավելությունն էներգետիկայի այլ ռեսուրսների համեմատ, որոնց մատակարարումը մեզնից չէ կախված:

Մարիամ Լեվինա

## Թուրքիա այցելող հայաստանցիների թիվը խիստ նվազել է 2015-ի առաջին կիսամյակում

Թուրքիա այցելող հայաստանցիների թիվը 2015-ի հունվար-հունիս ամիսներին կազմել է 18 524 հոգի:

Ինչպես NEWS.am-ը տեղեկանում է Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարարությունից, 2015-ի հունիսին Թուրքիա է այցելել 4 254 հայաստանցի, ինչը 34 տոկոսով պակաս է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:



Նախորդ տարի հունիսին Թուրքիա էր այցելել 6 424 հայաստանցի:

Իսկ 2015-ի հունվար-հունիս ամիսներին Թուրքիա այցելած հայաստանցիների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 32 տոկոսով՝ կազմելով 18 524 հոգի: Նախորդ տարի նույն ժամանակահատվածում Թուրքիա էր այցելել 27 152 հայաստանցի:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Հայաստանը կարող է բավարարել Իրանի տեխնոլոգիական պահանջները. Փորձագետ



Հայաստանը կարող է բավարարել Իրանի տեխնոլոգիական պահանջները: Այս մասին օգոստոսի 10-ին «Հայ-իրանական ռազմավարական գործընկերության հեռանկարները» թեմայով քննարկման ժամանակ հայտարարեց Հիմնադիր խորհրդարանի նախագահ, «Հայ-իրանական բարեկամություն» ՀԿ անդամ Գարեգին Չուգասովյանը:

Նրա խոսքով՝ Հայաստանը Իրանի համար կրթական կենտրոնի վերածելու մեծ հնարավորություններ կան: «Հայաստանը տեխնոլոգիական հնարավորությունների ազատ պայմանների առումով քաղաքական կամքի առկայության դեպքում հնարավորություն ունի դառնալ տեխնոլոգիական տարանցիկ կենտրոն: Որքան էլ որ մենք ասենք, որ Թուրքիան է կատարում այդ դերը, ամեն դեպքում այստեղ քաղաքական անվստահության հարց կա:

Հայաստանը, ի տարբերություն Թուրքիայի, տարածաշրջանում չի մրցակցում Իրանի հետ, իսկ Ադրբեջանի դեպքում դրան ավելանում է նաև ադրբեջանական մեծաքանակ բնակչության հարցը»,- ընդգծեց Չուգասովյանը:

Նրա խոսքով՝ սփյուռքը տեխնոլոգիական ոլորտում իր կապերով կարող է որոշակի դեր խաղալ ոչ միայն ներհայաստանյան կյանքում, այլ նաև տարածաշրջանում, մասնավորապես՝ Իրանում: «Տեխնոլոգիական ոլորտը ներդրումների տեսակետից նավթագազային ոլորտից հետո երկրորդն է»,- եզրափակեց Գարեգին Չուգասովյանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## «Հրապարակ». Հայ առաքելական եկեղեցին չի մկրտել Արեւմտյան Հայաստանից եկած իսլամացած երեք հայերի



«Հրապարակ» թերթը գրում է. «Հայաստանյայց առաքելական եկեղեցին չի մկրտել Համահայկական 6-րդ խաղերին մասնակցելու նպատակով Արեւմտյան Հայաստանի Դերսիմ գավառից Երեւան եկած, 1915 թ. բռնի իսլամացած երեք հայերի՝ երկու հայուհու և Տիգրանակերտից ժամանած մեկ հայորդու: Արեւմտյան Հայաստանի մեր հայրենակիցներն ուրբաթ օրը ստիպված են եղել մի քանի եկեղեցիներ գնալ, թախանձել, խնդրել առաքելական եկեղեցու հովիվներին՝ իրենց քրիստոնեության մեռնում օժել, սակայն սպարոյուն, բոլոր եկեղեցիներում թղթաբանական խնդիրներ են ստեղծել:

«Սկզբում գնացինք Էջմիածին, ապա՝ Խոր Վիրապ, վերջին եկեղեցին Սուրբ Հովհաննեսն էր՝ Կոնդի, բայց ամեն տեղ մերժում ստացանք, ոչ ոք մեզ չընդունեց: Անգամ սփյուռքի փոխնախարարի միջամտությունը և բանակցությունը կաթողիկոսարանի հետ օգուտ չտվեց»,- հիասթափված ասաց մկրտվել ցանկացողների մտերիմներից մեկը՝ նկատելով, որ եթե Հայ առաքելական եկեղեցին «հավատարիմ չէ» Աստվածաշնչին և չի մտահոգվում մեկ «մոլորյալով», ապա որն է նրա առաքելությունը:

Պարզվում է՝ բոլոր եկեղեցիներում պահանջել են տեղեկանք՝ տրված Պոլսի Պատրիարքի տեղապահ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանի կողմից՝ այն մասին, որ նրանք իսլամացած հայեր են, ինչը բացակայել է Արեւմտյան Հայաստանից ժամանած ծայտյալ հայերի մոտ: Մեր գրուցակիցը կասկածներ հայտնեց, որ Աթեշյանը գործում է Թուրքիայի իշխանությունների ցուցումով, ինչին, փաստորեն, միանում է Հայ առաքելական Եկեղեցին:

Պարզեցինք նաև, որ այս միջադեպի մասին իմացել են նաև սփյուռքի նախարարությունում, փոխնախարար Սերժ Սրապիտնյանն անձամբ բանակցել է Մայր Աթոռի հետ, բայց սպարոյուն: Իբրև լավագույն փոխգիջում ծայտյալ հայերին կաթողիկոսարանից առջարկել են առնվազն երեք տարի գնալ-գալ Հայաստան ու համապատասխան քննություններ հանձնել, որպեսզի հնարավոր լինի հասկանալ՝ արժե մկրտել, թե ոչ: Մայր Աթոռից բանավոր մեկնաբանություն չցանկացան տալ:

## Տասը պատճառ սահմանադրական փոփոխություններին «Ոչ» ասելու համար. Վարդան Օսկանյան



ԱԺ պատգամավոր, ԱԳ նախկին նախարար Վարդան Օսկանյանը ֆեյսբուքյան իր էջում անդրադարձել է սահմանադրական բարեփոխումներին եւ ներկայացրել Տասը պատճառ սահմանադրական փոփոխություններին «Ոչ» ասելու համար:

1) Այսօր սահմանադրական փոփոխությունների կարիք, քաղաքական եւ հասարակական պահանջ չկա: Հայաստանում չկա եւ երբեք չի եղել ո՛չ սահմանադրական եւ ո՛չ էլ քաղաքական ճգնաժամ: 2005-ին, երբ փոփոխվեց Սահմանադրությունը, կա՛ր դրա հրամայականը: Փոփոխվեց նախեւառաջ այն պատճառով, որ նոր Սահմանադրությունը պարտադիր պետք է համաձայնեցվեր Եվրոպայի խորհրդի առջև Հայաստանի ստանձնած պարտավորություններին: Երկրորդ, այնտեղ լուծվեց հայ ժողովրդի համար կարեւորագույն նշանակություն ունեցող երկքաղաքացիության հարցը: Եվ, վերջապես, նվազեցվեցին հանրապետության նախագահի բացարձակ լիազորությունները, դրանց մի մասը սահմանադրորեն անցավ խորհրդարանին եւ կառավարությանը:

2) Այսօրվա հիբրիդային Սահմանադրությունը պատշաճ կիրառության եւ արդար ընտրությունների պարագայում մեր պետության համար ճիշտ տարբերակն է: Այն, մի կողմից պարունակելով պառլամենտարիզմի տարրերը, կարող է նպաստել Հայաստանի ժողովրդավարության ամրապնդմանն ու տնտեսական զարգացմանը, մյուս կողմից՝ պարունակելով նախագահի լայն լիազորություններ, կարող է երաշխավորել համարժեք արձագանքը արտաքին մարտահրավերներին:

3) Այսօր քաղաքական մթնոլորտը բացարձակապես բարենպաստ չէ Սահմանադրության արմատական փոփոխության համար: Չկա բավարար համախմբում այդ գաղափարի շուրջ: Կառավարման համակարգի արմատական փոփոխության համար շատ ավելի մեծ քաղաքական, քաղաքացիական եւ հասարակական համախմբում է անհրաժեշտ: Այսօր այդ գաղափարի շուրջ իրական որեւէ համախմբում չկա:

4) Հայաստանում քաղաքական կուսակցությունները դեռեւս բավարար չեն կայացել, որպեսզի դառնան կառավարման համակարգի գլխավոր եւ միակ խարիսխը:

5) Իշխող քաղաքական ուժը, որը համակարգի փոփոխության գլխավոր նախաձեռնողն է, օրինակարության շատ լուրջ դեֆիցիտ ունի, որը մեծ ստվեր է գցում սահմանադրական փոփոխությունների ամբողջ գործընթացի վրա:

6) Բացարձակ վստահություն չկա քվեարկության համակարգի նկատմամբ: Այդ իսկ պատճառով հանրաքվեի արդյունքները, անկախ դրա ելքից, կասկածի տակ են դրվելու:

7) Ակնհայտ է, որ այս ամենն արվում է մեկ մարդու, մեկ քաղաքական ուժի՝ իշխանությունը պահելու հավակնությունները բավարարելու համար:

8) Այն, ինչ ներկայացվել է որպես նախագիծ, լի է հակասություններով եւ վտանգներով, օրինակ.

- Հայաստանի քաղաքական համակարգի գլխավոր չարիքը՝ կայուն մեծամասնության երաշխավորումը՝ լինի դա ընտրության երկրորդ փուլով, թե բոնուսային տարբերակով, փաստացի սահմանադրական նորմ է դառնում:

- Խորհրդարանի ձայների՝ 2/3-ով Սահմանադրության փոփոխության հնարավորությունը:

Չինված ուժերի գլխավոր հրամանատարի անձի շուրջ անորոշ ձեւակերպումները:

- 100 տոկոսանոց համամասնական ընրակարգի անցնելու քողի տակ Ընտրական օրենսգրքի հնարավոր այնպիսի փոփոխությունը, որը կամրագրի քվեարկության ռեյտինգային դրույթը՝ գործնականում դառնալով 100 տոկոսանոց մեծամասնական համակարգ:

9) Հայաստանը միակն է նախկին խորհրդային հանրապետություններից, ներառյալ բալթյան երկրները, որը փորձում է անցում կատարել խորհրդարանական նման կառավարման համակարգի: Վրաստանը հիբրիդային համակարգ ունի, մոտավորապես այնպիսին, ինչպիսին Հայաստանի այսօրվա համակարգն է: Մեզ առաջարկվող համակարգի նմանը չկա նաեւ տարածաշրջանի մյուս երկրներում: Թուրքիան նույնպես հիբրիդային համակարգ ունի, որտեղ հանրապետության նախագահն ընտրվում է ուղղակիորեն ժողովրդի կողմից:

10) Լոգոված, ոչ կուռ կառավարման նման համակարգը, որտեղ երկրի առաջին դեմքը համարվելու է որեւէ լիազորություն չունեցող եւ ժողովրդի կողմից չընտրված նախագահը, իսկ գործադիր լիազորություններով օժտված վարչապետը ամբողջական կախվածության մեջ է լինելու իր կուսակցությունից եւ նրա ղեկավարից, էապես կոուլացնի սպագայում հնարավոր արդյունավետ արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունը:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Հայ առաքելական եկեղեցին գգուշանում է թուրքական հատուկ ծառայություններից չնկրտելով իսլամացած հայերին. վարդապետ



Իվանացած հայերին Հայ առաքելական եկեղեցին չի մկրտում 2 կարևոր պատճառով՝ նրանցից շատերը մկրտության վկայական ստանալուց հետո գնում են Եվրոպա ու շարունակում գնալ մզկիթ, և կա մտավախություն, որ նրանք թուրքական հատուկ

Ծառայությունների կողմից գործուղված մարդիկ կարող են լինել և խառնվել համայնքի գործերին:

Այս մասին այսօր՝ օգոստոսի 20-ին, լրագրողների հետ գրույցում ասաց Կոմիտաս վարդապետ Հովնանյանը:

«80-ականներին մենք ասում էինք՝ եթե հայ է, ինչու՞ չմկրտենք, ինչու նրան օգտակար չլինենք, բայց տեսանք, որ մկրտվողների մեծամասնությունը ոչ թե քրդախոս հայեր են, այլ քրդեր են»,- ասաց Կոմիտաս վարդապետը՝ հավելելով, որ նրանցից շատերը մկրտության վկայական ստանալուց հետո գնում էին եվրոպական երկրներ՝ ասելով, որ հայ քրիստոնյաներ են ու կացության թույլտվություն ստանալուց հետո գնում էին մզկիթ:

Կոմիտաս վարդապետը նշեց, որ հայ առաքելական եկեղեցում իսլամացած հայերին մկրտելու համար անհրաժեշտ է վստահ լինել, որ նրանք հայ են ու այլ նպատակներ չեն հետապնդում:

Նրա խոսքով՝ Պոլսո համայնքի անվտանգության ու պահպանության հարցը նույնպես փոխկապակցված է այս խնդրի հետ, քանի որ ձևանալով որպես բռնի իսլամացած հայերի ժառանգներ՝ թուրքական հատուկ ծառայությունների կողմից գործուղված մարդիկ կարող են խառնվել համայնքի գործերին, ինչի նախադեպեր, ըստ նրա, եղել են:

«Մկրտվել ցանկացողը պիտի կրոնափոխ լինելու դիմում ներկայացնի իր համայնքին, որից հետո, սովորելով մեր եկեղեցու դավանանքը, կարող է մկրտվել: Ինչպես եք պատկերացնում թուրքական անունով որևէ մեկը գա ու ասի, որ ուզում է մկրտվել և մենք առանց նրա մասին տեղեկությունների մկրտենք նրան»,-ասաց նա:

Հիշեցնենք, որ Հայ առաքելական եկեղեցին չէր մկրտել Համահայկական 6-րդ խաղերին մասնակցելու նպատակով Արևմտյան Հայաստանից Երևան եկած, 1915 թ. բռնի իսլամացած երեք հայերի ժառանգներին, որոնք ցանկություն էին հայտնել մկրտվել Հայաստանում և դառնալ քրիստոնյա:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Ստեփանակերտի նախկին էլեկտրատեխնիկական գործարանը վերածվել է պահածոների գործարանի



Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանն օգոստոսի 24-ին այցելել է Ստեփանակերտի նախկին էլեկտրատեխնիկական գործարան:

Նա ծանոթացել է այնտեղ բիզնես տարածքի ձևավորման եւ արդեն գործող պահածոների գործարանի աշխատանքներին:

Երկրի ղեկավարը կարեւորել է արտադրական հզորությունների համապատասխանեցումն արդի պահանջներին՝ նշելով, որ դրանց ճիշտ ու արդյունավետ օգտագործումը հնարավորություն է տալիս ապահովել տնտեսության կայուն աճ:

Նախագահին ուղեկցում էին փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը, պաշտոնատար այլ անձինք:



Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Հայաստանում կրճատվել է դպրոցների թիվը



Հայաստանում կրճատվել է դպրոցների թիվը: Այս մասին, այսօր՝ օգոստոսի 26-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտնել է Ազգային վիճակագրական ծառայության սոցիալական եւ բնության պահպանության վիճակագրության բաժնի պետ Նելլի Բաղդասարյանը:

Երեսնամյա դպրոցների թիվն անփոփոխ է մնացել՝ 220: Միաժամանակ 2013-ին այն կրճատվել էր հասնելով 2016-ին, սակայն 2014-ին վերադարձել էր նախկին ցուցանիշին:

Շիրակի մարզում դպրոցների թիվը կրճատվել է 171-ից հասնելով 167-ի: Մնացած 9 մարզերում այդ ցուցանիշը կրճատվել է 1-2-ով:

Ընդհանուր առմամբ հանրապետությունում պետական դպրոցների թիվը կրճատվել է 1404-ից հասնելով 1391-ի, այդ թվում քաղաքներում 533-ից հատել է 528-ի, իսկ գյուղերում՝ 871-ից 863-ի:

Լուրեր Հայաստանից - NEWS.am



## Արևմտյան Հայաստան

### PKK-ն Դերսիմ նահանգն ինքնավար մարզ է հայտարարել. թուրքական մամուլ



Քուրդիստանի բանվորական կուսակցությունը (PKK) արդեն 5 օր է Թուրքիայի Դերսիմ նահանգն ինքնավար մարզ է հայտարարել: Այս մասին գրում է թուրքական haberler.com կայքը:

Նրանց փոխանցմամբ՝ քրդական խումբը փակել է նահանգի երկու կարեւորագույն ավտոճանապարհներն ու ստուգումներ է իրականացնում: Աղբյուրը հայտնում է, որ ճանապարհները հսկող քրդերը զենքով են բոլոր ավտոմեքենաները, ուսումնասիրում ուղեւորների անձնագրերը:

Հայտնի է դարձել նաեւ, որ քրդական խումբը պատրաստվում է եւս 15 օր ստուգումներ անցկացնել ավտոճանապարհներին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

### Թուրքիայում ապրող սասունցի հայր պատմել է իր մկրտության մասին



Արմատներով սասունցի, ներկայում Դիարբեքիրում բնակվող Կարոտ Սասունյանը Akunq.net-ի հետ գրույցում ներկայացրեց իր «մկրտության» պատմությունը: Արևմտյան Հայաստանում գործող եկեղեցիներ գրեթե չլինելու և քահանաներ չգտնվելու հետևանքով մեր ազգակիցները յուրօրինակ լուծումներ են գտնում՝ սեփական արմատները պահպանելու համար: Նրա հուզիչ

պատմությունը, որ թարգմանաբար ներկայացնում ենք ստորև, վեր է հանում այնտեղի հայության ունեցած էական խնդիրներից մեկը՝ գործող եկեղեցիների և Հայ առաքելական եկեղեցու ճշմարիտ հավատքի դրույթները ներկայացնող քահանաների պակասը...

«Ներկայում Դիարբեքիր նահանգին, իսկ նախկինում Սասուն գավառին ենթակա Խուլի գավառի Փասուր գյուղում, որտեղ նախկինում 15 մեծ ընտանիքներ էին ապրում, երկու եկեղեցիներ կային: Դրանցից մեկը Սուրբ Հակոբ Տեր-Հակոբյան եկեղեցին էր, իսկ մյուսը՝ Սուրբ Գալուստ Տեր-Մկրտչյանը:

Սուրբ Հակոբը մի նշանավոր եկեղեցի էր, որում որոշակի օրերի հարիսա էին ելում: Իսկ Սուրբ Գալուստ Տեր-Մկրտչյան եկեղեցին շատ ավելի հին էր և գտնվում էր ավերակ վիճակում: Չնայած դրան՝ այդ եկեղեցին ևս օգտագործվում էր որոշակի օրերի: Սուրբ Հակոբ Տեր-Հակոբյան եկեղեցին ժողովրդի շրջանում քրդերեն անվանվում էր «Դերիք-ա բավիյա» («Հողացավի եկեղեցի»), իսկ Սուրբ Գալուստ Տեր-Մկրտչյանը՝ «Դերիք-ա հարաբե» («Ավերակ եկեղեցի»):

«Դերիք-ա բավիյան» նախքան եկեղեցի դառնալն օգտագործվել է որպես հեթանոսական տաճար: Հողացավով տառապող հիվանդները չորեքշաբթի օրերին՝ արևածագից մինչև արևամուտ ընկած ժամանակահատվածում, այցելում էին այդ եկեղեցին, մոմ վառում և եկեղեցու ավերակներից մի քար վերցնում, որը տուն էին տանում, վառարանի վրա տաքացնում և ղնում այն հատվածի վրա, որում ցավ էին գգում: Նրանք հավատում էին, որ այդ կերպ բուժվում է հողացավը:

Մեկ էլ, որպեսզի երեխաները ջերմություն չունենան, կամ որպեսզի արդեն իսկ ջերմություն ունեցողները ապաքինվեն, նրանց, դարձյալ չորեքշաբթի օրերին, արևածագից մինչև արևամուտ ընկած ժամանակահատվածում տանում էին ավերակ դարձած եկեղեցին: Մետաղե ամանի մեջ յուղ էին այրում, աղոթքներ ընթերցում, ապա այդ ամանի մուրով խաչեր գծում երեխայի աջ ձեռքի բռան մեջ, ձախ ոտքի տակ և ճակատի մեջտեղում: Ուղիղ մի շաբաթ, այսինքն՝ մինչև հաջորդ չորեքշաբթի նրանք չպետք է լողանային, որպեսզի այդ խաչերը չմաքրվեն:

Ես նույնպես, երբ մի օր ջերմություն եմ ունեցել, հորական կողմից տատիկս իմ մասնակցությամբ այդ նույն արարողությունն է իրականացրել: Քանի որ ես համարում եմ, որ այդպիսով մկրտվել եմ՝ թե հեթանոսական եւ թե քրիստոնյա հավատքի համաձայն, չեմ ուզել այլ կերպ կնքվել:

Հիմա հետևյալ հարցն եմ ուղղում. քանի՞ հոգի է կարողացել այդ կերպ մկրտվել՝ Մայր հայրենիքի հողով, արեւով, ջրով ու կրակով...»:



Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Թուրքիայում հայերն ուխտ են կատարել Մարութա սարում



Ներկայում Թուրքիայի տարածքում գտնվող Սասունի Մարութա (Մարաթուկ) սարի ամենամյա ուխտին են մասնակցել աշխարհի տարբեր երկրներից ժամանած հայեր: Թուրքական Batmancagdas կայքի փոխանցմամբ՝ ամեն տարի հուլիսի վերջին իրականացվող Մարութա սարի վերելքն այս տարի եւս տեղի է ունեցել: Աշխարհի տարբեր կողմերից Մասուն եկած հայերը բարձրացել են Մարութա լեռան գագաթ, այնտեղ գտնվող Սուրբ Աստվածածին եկեղեցում մոմ վառել եւ աղոթել:

Սասունի քաղաքապետը նշել է, թե ամեն ինչ արել են որպեսզի Ստամբուլից եւ արտասահմանից եկած հայերի ուխտը հաջող անցնի: «Որպես տեղական իշխանություններ, մենք Մարութա լեռան հետ կապված նախագծեր ունենք, այդ թվում հյուրատուն ենք կառուցելու»,-ասել է Սասունի քաղաքապետը:

Նշենք, որ Մարութա սարը գտնվում է Արեւմտյան Հայաստանի Մասուն գավառում եւ եղել է սասունցիների սիրած եւ պաշտելի սարը, որը կոչվել է նաեւ Մարաթուկ:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Հայ առաքելական եկեղեցում չմկրտված Էրդալը Թուրքիայում փոխել է անձնագիրը, դարձել քրիստոնյա հայ



Դիարբեքիից Հայաստան ժամանած, իսլամ դավանող Էրդալ Մերկանը, որին մերժել էին մկրտել Հայ առաքելական եկեղեցում, Թուրքիա վերադառնալու հաջորդ օրը փոխել է անձնագիրը, որտեղ նշված է, որ նա հայ քրիստոնյա է, եւ այժմ նա ավելի մոտ է Հայ առաքելական եկեղեցուն

մկրտվելու իր երազանքին: Այս մասին այսօր՝ օգոստոսի 18-ին NEWS.am-ի հետ զրույցում ասաց ԱԺ պատգամավոր, «Արևտմահայոց ազգային համագումար» միջազգային հասարակական կազմակերպության լիազոր ներկայացուցիչ Արագած Ախոյանը՝ ավելացնելով, որ Էրդալը փոխել է նաև իր անունը, այժմ նա դարձել է Փարամաս:

«Ապարդյուն չարչարանքներից հետո եւս խաչերը գցեցի իրենց վիզը եւ ասացի՝ դուք կարելուք հոգով եք քրիստոնյա, եւ ճանապարհեցիք: Հասնելու հաջորդ օրը՝ օգոստոսի 14-ին, Էրդալը գնում է ոստիկանության անձնագրային բաժին եւ ասում, որ հենց հիմա ինքը պետք է ստանա նոր անձնագիր եւ փաստաթուղթ, որտեղ գրված լինի, որ ինքը քրիստոնյա է, հայ քրիստոնյա է: Ինքն անձամբ զանգահարեց եւ տեղեկացրեց այդ մասին, որովհետև ինձ կնքահայր է ասում: Ես ողջունեցի նրա այդ հուզիչ քայլը: Մա բացառիկ համարձակություն է, որովհետև Թուրքիայում սայրող ցանկացած մեկը, ով իրեն թուրք չի կոչում, գլխին մեծ վտանգ է կախված»,- պատմեց պատգամավորը:

Արագած Ախոյանի խոսքով՝ Էրդալն այժմ ունի այն փաստաթուղթը, որը նրանից պահանջել էին Էջմիածնում մկրտվելու համար, եւ շուտով պատրաստվում է օրինություն ստանալ հայկական եկեղեցիներից մեկում:

«Ամենակարևորն այստեղ այն էր, որ նա չնեղացավ մեր երկրից եւ եկեղեցուց: Նա բարձր գտնվեց: Նա բարձր գտնվեց ոչ թե չմկրտողներից, այլ մկրտել թույլ չտվողներից: Իսկ թույլ չտվողները մեր եկեղեցին չէր, դա ավելի խորքային էր: Եկեղեցին փաստաթուղթ էր ուզում, որ ինքը հայ է: Դա զավեշտալի պահանջ է, այն էլ ումի՛ց՝ այն մարդկանցից, ովքեր 100 տարի իրենց ինքնությունը գաղտնի են պահել, որպեսզի ֆիզիկական բնաջնջման չենթարկվեն: Փաստորեն, Էրդալն արդեն այդ փաստաթուղթն էլ ունի, հուսամ՝ շուտով կմկրտվի»-ասաց նա:



*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Թուրքիայի քաղաքներից մեկում հայերի տապանաքարերը որպես կոյուղու կափարիչ են օգտագործել



Թուրքական Թեքիրդաղ նահանգի ջրային տնտեսության վարչությունը հայտնաբերել է, որ Մալքարա քաղաքում հայկական տապանաքարերը որպես կոյուղու կափարիչ են օգտագործել: Այս մասին գրում է թուրքական «Today's Zaman»-ը՝ վկայակոչելով Ստամբուլի հայկական «Ակոս» պարբերականին: Աշխատավորներն այդ տապանաքարերը հայտնաբերել են վերանորոգման աշխատանքների ժամանակ, քաղաքի փողոցներից մեկում: Նրանք 7 յոթ տապանաքար են գտել ու այդ մասին հայտնել քաղաքապետարանին: Նշվում է, որ Մալքարայի քաղաքապետ Ուլաշ Յուրդակուլի կարգադրությամբ տապանաքարերը փոխանցվել են Թեքիրդաղի հնագիտության թանգարան՝ ուսումնասիրելու եւ պահպանելու նպատակով:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Սիյունք

### Կայացել է հայ կաթողիկե առաջնորդի գահակալության արարողությունը



Օգոստոսի 9-ին Չմմառի Տիրամոր վանքի բակում տեղի ունեցավ Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց Գրիգոր Պետրոս Ի նորընտիր կաթողիկոս պատրիարքի գահակալության արարողությունը: Արարողությանը ներկա էին Լիբանանում ՀՀ դեսպան Աշոտ Բոչարյանը, Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի ներկայացուցիչ

Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, Սուրբ Աթոռի Արևելյան եկեղեցիների ժողովի ներկայացուցիչները, Լիբանանում պապական նվիրակը, հայ եւ օտարազգի բարձրաստիճան հոգևորականներ, օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ, նախարարներ, պատգամավորներ, բարձրաստիճան գինվորականներ, ազգային կառույցների ղեկավարներ: Պատրիարքական գահը ընդունելուց հետո Գրիգոր Պետրոս Ի կաթողիկոս պատրիարքը մատուցեց իր առաջին պատարագը: Իր խոսքում կաթողիկոս պատրիարքը շնորհակալություն հայտնեց ՀՀ նախագահին, Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսներին գորակցության համար եւ վստահեցրեց, որ ամեն ջանք կգործադրի ամրապնդելու եւ սերտացնելու համագործակցությունը հայրենի իշխանությունների եւ նվիրապետական երկու աթոռների հետ: Պատարագին հետևեց ընթրիք, որի ժամանակ ընթերցվեցին նորընտիր կաթողիկոս պատրիարքին ուղղված բազմաթիվ շնորհավորականներ: Դեսպան Բոչարյանը ընթերցեց ՀՀ Նախագահ Մերժ Սարգսյանի շնորհավորական ուղերձը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Ստամբուլում վերաբացվել է հայկական Սուրբ Նշան եկեղեցին



Ստամբուլի Քարթալի շրջանի Սուրբ Նշան եկեղեցին վերանորոգումից հետո օծվել էւ բացվել է պատարագով: Թուրքական Timeturk-ի փոխանցմամբ՝ Քարթալի քաղաքապետարանի եւ մի շարք միությունների ֆինանսական աջակցությամբ վերանորոգվել է Քարթալի Սուրբ Նշան հայկական եկեղեցին: Մոտ 2 տարի տեւած վերանորոգումից հետո Սուրբ Նշան եկեղեցու բացմանը մասնակցել է նաեւ Քարթալի քաղաքապետ Ալթըն Օզը, Պոլսո հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ, արք. Արամ Աթեշյանը եւ այլք:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Միջազգային

### Լեհաստանի Վրոցլավ քաղաքի հրապարակներից մեկն այսուհետ կրելու է «Հայկական» անվանումը

Լեհաստանի Վրոցլավ քաղաքի քաղաքային խորհրդի որոշմամբ Վրոցլավի կենտրոնում գտնվող Ստարե Միասոտ թողամասի Դոմինիկյան եկեղեցու հարևանությամբ և Կլեմենս Յանիցկու փողոցի վրա գտնվող հրապարակն անվանակոչվել է «Հայկական»:



Հայաստանի ԱԳՆ մամուլի ծառայությունից հայտնում են, որ այդ հրապարակում տարիներ առաջ տեղադրվել էր հայկական Խաչքար:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Հասարակական

### Պարադոքսալ կերպով Հայաստանի եւ Թուրքիայի շահերը կարող են համընկնել. Հարցազրույց



NEWS.am-ը ներկայացնում է հարցազրույց Ռուս-հայկական համալսարանի համաշխարհային քաղաքականության եւ միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ, արտակարգ եւ լիազոր դեսպան Արման Նախասարգյանի հետ Թուրքիայում ընթացող զարգացումների մասին:

**Թուրքիայում, որոշ վերլուծաբանների կարծիքով՝ պատերազմ է Սուրուչում տեղի ունեցած արյունահեղությունից հետո, Անկարան ռազմական գործողություններ էսկսել քրդերի դեմ, որը տարածվում է ոչ միայն իր տարածքի քրդական հատվածի, այլև հարեան պետություններում՝ Սիրիայում եւ Իրաքում բնակվող նրանց հայրենակիցների վրա: Ինչո՞վ են պայմանավորված դեպքերի նման զարգացումները եւ ի՞նչ հետեւանքներ կարող են դրանք ունենալ Մեծ Մերձավոր Արեւելքի քաղաքական իրավիճակի վրա:**

Հարցն իր մեջ պարունակում է երկու պատասխան՝ կապված Թուրքիայի արտաքին եւ ներքին քաղաքականության հետ: Խորհրդային Միության փլուզման հետեւանքով առաջացած միաբեւեռ աշխարհակարգի պայմաններում Օսմանյան կայսրության ռեկոնստրուկցիայի անհաջող փորձերը, ինչպես նաեւ Մերձավոր Արեւելքի եւ արաբական աշխարհի լիդեր դառնալու ամբիցիոզ ծրագրերի տասպալումը խորապես ֆրուստրացրեցին նյուօսմանյան դոկտրինայի հեղինակներին: Թուրքիան ոչ միայն ձախողվեց Սիրիայի վարչակարգի տասպալման, Եգիպտոսի, Իսրայելի մյուս

հարեւանների հետ իր հարաբերություններում, այլև որպես ՆԱՏՕ-ի հարավային ֆլանգի ֆորպոստ, սկսեց թուլացնել իր դիրքերը, որում որոշակի դեր են խաղում Վաշինգտոնի հետ, մեղմ ասած, զուսպ հարաբերությունները: Մակայն արտաքին քաղաքականության գետնի վրա Թուրքիային ամենամահանգստացնողն Իրանի տարածաշրջանային գերտերություն դառնալու եւ Միացյալ Նահանգների համար Թուրքիային փոխարինելու ռեալ հեռանկարն է:

**Իսկ ի՞նչ դեր է խաղում Իսլամական պետությունը (ԻԼԻՊ) Թուրքիայի արտաքին քաղաքականությունում եւ ինչպե՞ս են զարգանում նրա հարաբերությունները ահաբեկիչների հետ:**

Ես կասեի ոչ վատ եւ ծրագրավորված: Անկարան աշխարհի առջեւ հանդես է գալիս իբր ԻԼԻՊ-ի դեմ պայքարող պետություն, սակայն իրականում նա քիչ ջանք ու եռանդ չի ինչայում Իսլամական պետության կայացման եւ հզորացման համար: Նրա տարածքից են ահաբեկիչները սնվում ռազմատեխնիկական, նյութական, ֆինանսական եւ մարդկային ռեսուրսների առումով: Թուրքիայի հարավում գործում են ահաբեկիչների ճամբարները նրանց մարզումների, հանգստի եւ բուժման համար:

**Մակայն, հավանաբար, Թուրքիան դրանից ունի նաեւ իր օգուտները, այդպես չէ՞:**

Իհարկե ունի: ԻԼԻՊ-ի Իրաքում հափշտակած նավթը, ինչպես նաեւ արվեստի արժեքները արտասահման են արտահանվում Թուրքիայի միջոցով եւ իրացվում տարբեր երկրներում: Գողացված նավթի մեկ բարեկի դեմայինգային գինը տատանվում է 20-25 դոլարի սահմաններում:

**Բայց չէ՞ որ Թուրքիան ԱՄՆ-ի ռազմական դաշնակիցն է, իսկ Վաշինգտոնը գլխավորում է կոալիցիոն ուժերի պայքարն ԻԼԻՊ-ի դեմ: Ինչպե՞ս է դա կոչվում դիվանագիտության մեջ:**

Դա տարբեր կերպ են կոչում, բայց հաճախ՝ «կրկնակի հաշվապահություն»: Այստեղ եւ՝ Վաշինգտոնի, եւ՝ Անկարայի կողմից կրկնակի խաղ է գնում: ԱՄՆ-ին միայն վերջերս հաջողվեց համոզել Անկարային, որպեսզի նա թույլատրի կոալիցիոն ուժերին օգտագործելու Ինջիրլիքի ռազմաստղային բազան ԻԼԻՊ-ի դեմ օդային ռեյդեր կազմակերպելու համար: Մակայն թուրքերը թուրքեր չէին լինի, եթե առիթը բաց թողնեին ու քեռի «Մեմից» մի բան չպոկեին: Նրանք պայման դրեցին, որ այդ թույլտվության դիմաց ամերիկացիները թուրքերին «հանձնեն» Հյուսիսային Միսրիայի 50 կիլոմետրանոց բուֆերային գոտին, որն, ի դեպ, խիտ բնակեցված է հայերով եւ սիրիական քրդերով:

**Դուք սկզբում նշեցիք, որ թուրքական իրադարձություններում մեծ էներքաղաքական գործոնի դերը: Կարո՞ղ եք ավելի կոնկրետ ասել, թե ինչը նկատի ունեք:**

Ես նկատի ունեմ քրդական բաղադրյալը, որն առաջնային նշանակություն ունի Թուրքիայի ապագայի համար: Թեև պաշտոնական Անկարան հայտարարում է, որ քրդական հարց գոյություն չունի, հատկապես ցմահ բանտարկված Աբդուլլահ Օջալանի կողմից արված այն հայտարարության կապակցությամբ, թե նրա գլխավորած Քրդական բանվորական կուսակցությունը (PKK) դադարում է իշխանությունների դեմ պայքարել, սակայն քրդական հարցը կա եւ մնում է ներկա Թուրքիայի համար 1 խնդիրը, որն ավելի արվեց վերջերս տեղի ունեցած ընտրություններից եւ պայտամենտում քրդական Ժողովրդական դեմոկրատական կուսակցության ստացած 80 մանդատից հետո: Իսկ Սուրուչի ահաբեկչությունը, ես չեմ բացառում, որ կազմակերպված լինի թուրքական հատուկ ծառայությունների կողմից, քրդերի դեմ զանգվածային գործողություններ սկսելու նպատակով, երկրի ներսում եւ

նրա սահմաններից անդին: Այսօր, ԻԼԻՊ-ի դեմ պայքարելու ծխածածկույթի տակ, թուրքական F-1 ինքնաթիռներն ակտիվորեն ոմբակոծում են Հյուսիսային Իրաքի Քուրդիստանի ինքնավար մարզը, որտեղ տեղակայված են ԻԼԻՊ-ի դեմ կռվող Մատուդ Բարզանիի ջոկատները:

**Որքանով են իրատեսական քրդական պետության ստեղծման կանխատեսումները:**

Քաղաքականության մեջ ոչինչ բացառված չէ, մանավանդ, եթե նկատի ունենանք զարգացումների այն բուռն դինամիկան, որն այսօր հատուկ է միջազգային հարաբերություններին:

Քրդական շարժման հարցում հետաքրքիր է Միացյալ Նահանգների բռնած գիծը: Նրանք սերտորեն համագործակցում են Իրաքի քրդերի հետ, ինչը վերջին հաշվով, կարող է նպաստել քրդական պետության կազմավորման գործին: Այնպես որ գուշակելի ապագայում, իմ կարծիքով, բացառված չէ Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի բարեկամ եւ դրածո քրդական պետության առաջացումը, որը Վաշինգտոնի ձեռքին կարող է դառնալ նաեւ զսպաշապիկ Թուրքիայի քաղաքական եւ ռազմական նկրտումների չափավորման համար:

**Իսկ Ռուսաստանը կմասնակցի՞ այդ զարգացումներին:**

Ռուսաստանն՝ ունենալով նախկինում ավելի սերտ հարաբերություններ քրդական շարժման հետ, քան ԱՄՆ-ը, ներկայումս ձեռնպահ է մնում նրա հետ հարաբերությունների զարգացումից: Դա բացատրվում է ուկրաինական թնջուկում Ռուսաստանի խնճավածությամբ եւ Արեւմուտքի հետ լրացուցիչ առճակատումից խուսափելու նրա ցանկությամբ: Թե ինչպիսին կլինեն դեպքերի զարգացումները, ցույց կտա ժամանակը:

**Իսկ ինչպիսի՞ն պետք է լինի Հայաստանի դիրքորոշումը քրդական շարժման հարցում: ԱԳՆ-ն պետք է հանդես գա լուռ դիտորդի դերով, թե՛ նա խնդիրներ ունի լուծելու, հատկապես նկատի ունենալով դեպքերի զարգացումը եւ հայկական շահերի պաշտպանությունը թուրք-քրդական հարաբերությունների զարգացման դինամիկայում:**

Նախ, մենք պետք է մեկնակետ ընդունենք Մեւրի պայմանագրի 62, 63, 64 կետերը որպես հայերին եւ քրդերին «միավորող իրավական փաստաթուղթ, որտեղ հստակ գրված է ու զգված, որ Հայաստանից հարավ ընկած է Քուրդիստանը, որն ունի իր հստակ սահմանները»:

Եթե մենք ենթադրելու լինենք, որ Մեծ Քուրդիստանի կազմավորման հարցը ուստոպիա չէ եւ գուշակելի ապագայում քարտեզի վրա կարող է հայտնվել 40 միլիոնանոց տերություն, ապա հիմնականից հարկ է բանակցել քրդերի հետ հայ-քրդական ավտոնոմ հանրապետություն (կոնդոմինիում) ստեղծելու ուղղությամբ:

Միամտություն կլիներ կարծել, որ եթե Մեծ Քուրդիստանը կայանա, ապա քրդերը հիշեն հայկական կորցված հողերը, որում նրանց դերակատարությունն ամենեւին էլ վերջինը չի եղել: Իսկ եթե Թուրքիան երբեւիցե կանգնելու լինի տարածքային զիջումների անխուսափելիության առջեւ, ապա անպայմանորեն նախապատվությունը կտա Հայաստանին, այլ ոչ թե քրդերին՝ նկատի ունենալով վերջիններիս բազմաթանկությունը, ազրեսիվությունը եւ քաղաքական այնորժակները:

Հայկական դիվանագիտության կարելուր խնդիրներից մեկը պետք է լինի հայ-թուրք-քուրդ եռանկյունում ճիշտ եւ հմուտ մանևերելը: Պարադոքսալ կարող է հնչել, սակայն սա, ըստ երևույթին, այն հազվագյուտ դեպքն է, երբ Հայաստանի եւ Թուրքիայի շահերը կարող են համընկնել:

**Մշակութային**

**Պարսկերենով հրատարակվել է Երվանդ Օտյանի «Անիծյալ տարիներ 1914-1919, անձնական հիշատակներ» գիրքը**

Իրանահայ ժողովրդավարական ուժերի համադրող մարմնի կողմից կյանքի կոչված «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման հանձնախմբի» նախաձեռնությամբ, Թեհրանում, պարսկերենով հրատարակվել է արեւմտահայ անվանի գրող, երգիծաբան, լրագրող եւ հրապարակագիր Երվանդ Օտյանի «Անիծյալ տարիներ 1914-1919, անձնական հիշատակներ» գիրքը: Այն հեղինակի հուշագրություններն է Ցեղասպանության եւ բռնազաղթի օրերից, հաղորդում է «Արաքս» շաբաթաթերթը:

416 էջանոց այս գիրքը, որ հրապարակ է իջել 1100 տպաքանակով, պարսկերեն է թարգմանել իրանահայ տաղանդավոր թարգմանիչ Անդրանիկ Խեչումյանը եւ տպվել է Միրզախանյան ընտանիքի մեկենասությամբ Արամայիս Միրզախանյանի հիշատակին, «Աֆրագ» հրատարակչատան միջոցով:

Ա. Խեչումյանն իրանահայ ամենաաշխույժ թարգմանիչներից է: Նա իր թարգմանած տասնյակ գրքերի շարքին թարգմանել է նաև հրատարակել է նաև Երվանդ Օտյանի «Ընկեր Բ. Փանջունի»-ն, որը մեծ ընդառաջում է գտել պարսիկ ընթերցողի կողմից եւ առաջին հրատարակությունից, ընդամենը, քանի ամիս հետո վերահրատարակվել:

Նշենք, որ Իրանահայ ժողովրդավարական ուժերի համադրող մարմինը կյանքի է կոչվել եւ հովանավորվում է Թեհրանի Հայ մարգա-մշակութային «Ինֆֆի» համալիրի, Իրանահայ ազգային եւ մշակութային միության, Աշխարհատեսների հայկական կենտրոնի, անկախ մտավորականների, «Իրանահայեր» լրատվական կայքէջի եւ «Արաքս» շաբաթաթերթի կողմից:

**Խոհեր**

**Մեր Անցած Ճամփան**

*Թ. Ղարախանյան Միրակցի*

Քննության օրը հասավ... ու գնացի... Ինձ թվաց... երազի մեջ մտա. երեք ժամ քույր-քույր ամպերի մեջ կորել էի եւ ոտքերս ձանրություն չէին գգում... երեք ժամ անց, վեց էջանոց քննության հարցերը լրացրած թվաց երազից արթնացա... շուրջս դեռ լեցուն տղաներ էին նստած, կարծես մառախուղի շղարշի մյուս կողմն էին եւ միայն իրենց սեվ գլուխն էի տեսնում... չէի ուզում այս երազից արթնանալ. վերջացրի... թուղթը ձեռքիս կանգնեցի եւ չգիտեմ ինչու մոռացել էի ինչ պիտի անեմ... քրտնած ձեռքերով չգիտեմ ինչքան կանգնած մնացի մինչեւ քննիչի ձայնը լսեցի: “Թամամ քարդին”... Թուղթերս հանձնեցի եւ մեծ հույսերով լցված վերադարձա պապոնցս տուն:

